ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

« 29 » 10 2021 թ.

№ 27/01-671

ք. Երևան Գայի պողոտա 19
հեռ. /+374 11/ 51-86-86
Ֆաքս. /+374 11/ 51-86-80
Էլ. փոստ. nor_norq@yerevan.am

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՄԱՆ ԵՐԻՋԱՆՅԱՆԻՆ
ք. Երևան, Նորք 1-ին նրբ. 5 տուն

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի (լրիվ) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 05.04.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/76-4» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ պայմանագրով) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

18.10.2021 թվականին Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ է մուտքագրվել «Ազուռ» ՍՊ ընկերության գրությունն առ այն, որ ֆինանսական խնդիրներից ելնելով ընկերությունը չի կարող մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքն ըստ պայմանագրով հաստատված N 1 հավելվածի ժամանակացույցի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հրամաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետերը խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ազուռ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը միակողմանի լուծում է պայմանագրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՍՈՒՐԵՆ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

Իրավաբանական բաժին
Ա. Կարապետյան
Հեռ.՝ 011-51-86-28